

# **ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՆԱԽԱԳԻԾ

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

### **ՈՐՈՇՈՒՄ**

«    » \_\_\_\_\_ 2022 թվականի    N... -L

## **ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածի 4-րդ մասը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի N 749-L որոշման 9-րդ գլխի 1.2 ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

Հաստատել՝

1. Գյուղատնտեսության ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության հայեցակարգը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Գյուղատնտեսության ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ցանկը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Առաջարկել ՀՀ վարչապետի 2021 թվականի հուլիսի 6-ի N 719-Ա որոշմամբ ստեղծված՝ Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի և դրա Փարիզյան համաձայնագրի պահանջների ու դրույթների կատարման միջգերատեսչական համակարգման խորհրդին սույն որոշման հավելված 2-ով նախատեսված միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ վեցամսյա պարբերականությամբ հաշվետվություն ներկայացնել ՀՀ կառավարություն:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող

օրվանից:

Հավելված 1

ՀՀ կառավարության 2022 թվականի

«    » \_\_\_\_\_ N... -L որոշման

**ՀԱՅԵՑԱԿԱՐԳ**

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՄԱՐԿՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ**

Երևան 2022թ.

## 1. ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

1. Հայաստանն իր ամբողջ տարածքով և խոցելի էկոհամակարգերով համարվում է կլիմայի փոփոխության նկատմամբ առավել զգայուն երկիր: Տարեցտարի արձանագրվող օդի ջերմաստիճանի աճը, էքստրեմալ եղանակային երևույթների (երաշտ, ջերմային ալիքներ, ցրտահարություն, կարկտահարություն, ուժեղ քամիներ և այլն) հաճախականության և ինտենսիվության ավելացումը, ինչպես նաև մթնոլորտային տեղումների զգալի նվազումն ակնհայտ բացասական ազդեցություն են թողնում երկրի էկոհամակարգերի, տնտեսության, մարդկանց գործունեության և առողջության վրա:
2. Ըստ կանխատեսումների առաջիկա 100 տարիների ընթացքում կլիմայի փոփոխության արդյունքում ակնկալվում է ջերմաստիճանի բարձրացում, տեղումների նվազում, երաշտների, տեղատարափ անձրևների ու հեղեղումների, ուժգին քամիների, ինչպես նաև երոզիոն գործընթացների ուժգնացում:
3. Կլիմայական պայամանների փոփոխությունները կարող են հիվանդությունների բռնկման և վնասատուների տարածման, ինչպես նաև մոլախոտային բուսականության փոփոխության պատճառ հանդիսանալ:
4. 1929-2016 թվականների ընթացքում Հայաստանում արձանագրվել է միջին տարեկան ջերմաստիճանի բարձրացում  $1.23^{\circ}\text{C}$ -ով: Համաձայն կանխատեսումների, մինչև 2040 թվականը միջին տարեկան ջերմաստիճանը հանրապետությունում կբարձրանա  $1.6^{\circ}\text{C}$ -ով, իսկ մինչև 2100 թվականը՝  $4.7^{\circ}\text{C}$ -ով: Ջերմաստիճանի փոփոխության ազդեցությունն առավել խիստ կարտահայտվի Արարատյան դաշտում:
5. Կանխատեսվում է, որ մինչև 2040 թվականը տեղումների միջին քանակը կնվազի շուրջ 2.7%-ով, մինչև 2070 թվականը՝ 5.4%-ով, իսկ մինչև 2100 թվականը՝ 8.3%-ով: Տեղումների նշված փոփոխությունները կհանգեցնեն Հայաստանում երաշտի ժամանակաշրջանների ավելացմանը:
6. Ակնկալվում է, որ հողի խոնավությունը կնվազի 10-30%-ով, հողի ջրային դեֆիցիտը կավելանա 25-30%-ով: Արդյունքում, ՀՀ նախալեռնային և ստորին լեռնային շրջաններում կնվազեն անջրդի մշակության համար նախատեսված տարածքները:
7. Կլիմայի փոփոխության հետևանքով Հայաստանում կանխատեսվում է գետերի հոսքի զգալի նվազում: 2011-2040 թվականների ընթացքում հոսքը կնվազի 12%-ով, իսկ 2100 թվականին այդ ցուցանիշը կկազմի մինչև 7%: Կանխատեսվում է նաև Սևանալճի ավազանի գետերի ընդհանուր ներհոսքի նվազում շուրջ 34%-ով:
8. Հանրապետության ցածրադիր գոտիներում գրեթե ամեն տարի դիտվում են երաշտներ, իսկ նախալեռնային գոտում երաշտների կրկնությունը կազմում է մոտ 50%: 2000-2017 թվականների ընթացքում 1961-1990 թվականների համեմատ շուրջ 33 օրով աճել է երաշտների տևողությունը (1961-1990 թվականների ընթացքում երաշտի միջին տևողությունը կազմում էր 87 օր): Վերջին տարիներին երաշտային գոտու վերին սահմանը ընդլայնվել է՝ ընդգրկելով լեռնային շրջանները:
9. Կանխատեսումների համաձայն, հանրապետության հիմնական

գյուղատնտեսական գոտիներում (Արարատյան հարթավայր, Տավուշի և Սյունիքի հովիտներ) մինչև 2100 թվականը միջին տարեկան ջերմաստիճանը կկազմի 16-18<sup>0</sup>C (1961-1990 թվականների ժամանակահատվածում այն կազմում էր 10-14<sup>0</sup>C), իսկ ամռան ամիսներին միջին ջերմաստիճանը կարող է հասնել մինչև 27<sup>0</sup>C: Դրան զուգահեռ կդիտվի տեղումների նվազում մոտ 12%-ով:

10. Գյուղատնտեսության ոլորտը չափազանց զգայուն է կլիմայի փոփոխության նկատմամբ և մեծապես կախված է եղանակային պայմաններից:
11. Առավել հաճախակի և ինտենսիվ դարձած հիդրոոլերևութաբանական վտանգավոր երևույթները (ՀՎԵ), ինչպիսիք են կարկտահարությունը, ուշ գարնանային ցրտահարությունը, վարարումները, սելավները, սողանքները, երաշտն ու խորշակները, ամեն տարի իրենց բացասական հետևանքներն են թողնում գյուղատնտեսության ոլորտի վրա և էապես նպաստում ինչպես արտադրական ծավալների նվազմանը, այնպես էլ՝ գյուղական բնակչության եկամուտների կրճատմանը:
12. Հիդրոոլերևութաբանական վտանգավոր երևույթներից ՀՀ գյուղատնտեսության ոլորտին առավել մեծ վնաս է հասցնում կարկտահարությունը, որի պատճառած վնասը 2014-2017 թվականների ժամանակահատվածի համար գնահատվում է շուրջ 61.2 մլրդ ՀՀ դրամ: Վերջին տարիներին երաշտից, կարկուտից, հեղեղումներից, ցրտահարություններից և սելավներից գյուղատնտեսությանը հասցված ամենամյա վնասը գնահատվում է շուրջ 15-30 մլրդ ՀՀ դրամ:
13. ՀՀ տարածքի արտահայտված ուղղաձիգ գոտիականության, լեռնային ռելիեֆի կտրտվածության և չոր, մայրցամաքային կլիմայի պատճառով գյուղատնտեսական արտադրության բուսաբուծության ճյուղը տարբեր ինտենսիվությամբ է ենթարկվում բնական ռիսկերի բացասական ազդեցությանը: Ազդեցության աստիճանը խիստ փոփոխվում է տարբեր բնահողային գոտիների և տարբեր մշակաբույսերի դեպքում: Կլիմայի փոփոխության բացասական ազդեցությունն ավելի արտահայտիչ է դառնում մարդածին տարբեր գործոնների (ոչ ռացիոնալ հողօգտագործում և գյուղատնտեսության ոչ ճիշտ վարում) համատեղման արդյունքում, ինչի պատճառով առավել խոցելի են դառնում հանրապետության ցածրադիր և միջին բարձրության գոտիները: Լեռնային գոտիները, որտեղ համեմատաբար քիչ են մարդածին գործոնները, ավելի քիչ են ենթարկվում կլիմայի փոփոխության բացասական ազդեցությանը:
14. ՀՀ տարածքի շուրջ 80%-ն ենթարկված է տարբեր աստիճանի անապատացման, ինչը տեղի է ունեցել ինչպես մարդածին գործոնետության արդյունքում, այնպես էլ՝ պայմանավորված է բնական գործոնների ազդեցությամբ և գեոմորֆոլոգիական առանձնահատկություններով:
15. Ըստ կանխատեսումների, առաջիկա 100 տարիների ընթացքում Հայաստանում կլիմայի կանխատեսվող փոփոխության արդյունքում տեղի կունենա ջերմաստիճանի բարձրացում, գոլորշիացման ինտենսիվացում և հողի խոնավության նվազում 10-30 %-ով, 7-13%-ով կնվազի գյուղատնտեսական մշակաբույսերի խոնավապահովվածությունը, 25-30%-ով կավելանա հողի ջրային դեֆիցիտը, 25%-ով կկրճատվի գետերի հոսքը: Արդյունքում՝ մոտ 24%-ով կնվազի ոռոգվող հողատարածքների արտադրողականությունը,

կնկատվի հողերի և բնական արոտավայրերի դեգրադացիայի տեմպերի ավելացում, իսկ արոտավայրերի ընդհանուր մակերեսը և բերքատվությունը մինչև 2030 թվականը կկրճատվի 4-10%-ով: Առավել արժեքավոր ենթալայան և ալայան գոտու արոտավայրերի դեպքում այդ ցուցանիշը կնվազի 19-22%-ով:

16. Սպասվում է նաև խոտհարքների բերքատվության 7-10%-ով նվազում, որն իր հերթին կհանգեցնի կերարտադրության ծավալների կրճատման: Համաձայն կանխատեսումների մինչև 2030 թվականը գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը կնվազի 8-14%-ով:
17. Կլիմայի փոփոխության բացասական ազդեցությունը գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության վրա հիմնականում պայմանավորված է ջերմաստիճանի և տեղումների փոփոխության ուղղակի ազդեցությամբ, ոռոգման ջրի նկատմամբ պահանջի ավելացմամբ և տեղումների կրճատման ու բարձր գոլորշիացման պայմաններում ոռոգման ջրի պաշարների նվազմամբ, ինչպես նաև կլիմայական ռիսկերի հաճախականության, ինտենսիվության և տևողության մեծացմամբ ու տարածական բաշխվածության ընդլայնմամբ:
18. Մշակաբույսերի բերքատվության փոփոխության գնահատումը կանխատեսվող կլիմայի փոփոխության պայմաններում իրականացվել է METRAS կլիմայական մոդելի միջոցով:

Ցորենի բերքատվության կանխատեսվող փոփոխությունն ըստ

մարզերի (առանց հաշվի առնելու ագրոտեխնիկական միջոցառումները), %

Մարզ	2030թ.	2040թ.	2050թ.	2060թ.	2070թ.
Արարատ	-4.53	-8.39	-12.23	-16.06	-19.87
Կոտայք	-5.01	-10.38	-15.71	-17.02	-19.3
Վայոց ձոր	8.34	7.4	6.47	5.54	4.61
Շիրակ	-5.62	-9.92	-10.19	-12.43	-18.65
Գեղարքունիք	-5.98	-11.77	-14.53	-13.25	-19.95
Լոռի	3.15	5.34	5.46	7.52	7.52
Սյունիք	10.5	12.3	10.0	8.1	7.3

Կարտոֆիլի բերքատվության կանխատեսվող փոփոխությունն ըստ մարզերի, %

Մարզ	2030թ.	2040թ.	2050թ.	2060թ.	2070թ.
Գեղարքունիք	-3.94	-7.01	-10.02	-12.22	-14.209
Կոտայք	-4.652	-6.55	-9.46	-12.364	-15.268
Շիրակ	-7.552	-10.149	-13.366	-16.223	-20.736
Լոռի	-3.196	-7.26	-9.072	-11.642	-13.985

Սյունիք -4.093 -8.389 -10.42 -13.2 -17.741

Խաղողի բերքատվության կանխատեսվող փոփոխությունն ըստ մարզերի, %

Մարզ	2030թ.	2040թ.	2050թ.	2060թ.
Արմավիր	-5	-9.3	-12.5	-19.7
Վայոց ձոր	5.3	9.1	10.0	11.8
Արարատ	-3.7	-5.6	-10.4	-14.8

19. Կլիմայի փոփոխության բացասական ազդեցության պատճառով առավել խոցելի է դառնում պարենային անվտանգության հիմնահարցը հանրապետությունում:
20. ՀՀ-ում անասնաբուծությունից ստացվող համախառն արտադրանքի մոտ 75 %-ը բաժին է ընկնում տավարաբուծությանը: Խոզաբուծությունից, ոչխարաբուծությունից և թռչնաբուծությունից ստացվող արտադրանքը կազմում է ամբողջ համախառն արտադրանքի 25%-ը:
21. Կլիմայի փոփոխության հետևանքն անասնաբուծության ոլորտի վրա մասնավորապես արտահայտվում է բնական կերհանդակների և արոտավայրերի վրա ունեցած բացասական ազդեցությամբ: Կանխատեսումների համաձայն մինչև 2030 թվականը կրճատվելու է Հայաստանի արոտավայրերի ընդհանուր մակերեսը (ենթալայան և ալայան գոտու արոտավայրերի տարածքները՝ 19-22%-ով), իսկ դրանցից ստացվող բերքի ծավալը կնվազի 4-10%-ով: Այս ամենի արդյունքում խիստ կնվազեն անասնակերի արտադրության ծավալները:
22. Կլիմայի փոփոխության հետևանքները գյուղատնտեսությունում տարբեր կերպ են անդրադառնում ոլորտում ներգրավված կանանց և տղամարդկանց վրա, վերջիններս ունեն տարբեր կարիքներ, հնարավորություններ և կարողություններ: Շատ դեպքերում կանայք հարմարվողականության տեսանկյունից լրացուցիչ խոչընդոտների են հանդիպում կապված սոցիալական նորմերի և գործելակերպի հետ, որոնք սահմանափակում են նրանց համար տեղեկատվության, ռեսուրսների և հնարավորությունների հասանելիությունը: Նման խնդիրները վերջին հաշվով կարող են նպաստել գենդերային անհավասարության խորացմանը:

-  
-

**2. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

23. Հայեցակարգի նպատակն է նպաստել Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսության դիմակայության բարձրացմանը կլիմայական վտանգների, ռիսկերի և աղետների նկատմամբ, ինչպես նաև կլիմայի փոփոխության մարտահրավերների նկատմամբ հարմարվողականության արդյունավետության բարձրացմանը:
24. Գյուղատնտեսության ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության խնդիրներն են.
- գյուղատնտեսական արտադրությունում ընդգրկված միավորների իրազեկվածության ցածր մակարդակը,
  - գյուղական բնակավայրերում կլիմայական վտանգների, ռիսկերի և աղետների կանխատեսման և արագ արձագանքման մեխանիզմների և համակարգերի հասանելիության ցածր մակարդակը,
  - կլիմայական վտանգների, ռիսկերի և աղետների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության, քարտեզների և տեղեկատվական հենքերի ստեղծման և կատարելագործման անհրաժեշտությունը,
  - կլիմայական վտանգների, ռիսկերի և աղետների հետևանքով արձանագրվող կորուստների հաշվառման և գրանցման մեխանիզմների և համակարգերի միասնական հարթակի բացակայությունը,
  - գյուղատնտեսության ոլորտում կլիմայի փոփոխությանն ու հարմարվողականությանն ուղղված նպատակային ծրագրերի խթանումը:

### 3. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

25. Սույն հայեցակարգի 2-րդ գլխում ներառված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է.
- գյուղատնտեսության ոլորտում ներգրավված կառույցների, գյուղացիական տնտեսությունների և համապատասխան մասնագետների կարողությունների հզորացում՝ հիմնվելով տեղական և միջազգային լավագույն փորձի վրա,
  - ապահովագրական նոր պրոդուկտների մշակում և ներդրում կլիմայական վտանգների, ռիսկերի և աղետների նկատմամբ գյուղատնտեսական արտադրության դիմակայության բարձրացման նպատակով,
  - գյուղատնտեսական մշակաբույսերի սերմնաբուծության, սերմարտադրության և տնկարանային արտադրության ոլորտներին հասցեական աջակցության մեխանիզմների մշակման և ներդրման միջոցով,
  - կլիմայի փոփոխության պայմաններում հողային և ջրային ռեսուրսների օգտագործման արդյունավետ և խնայողական տեխնոլոգիաների ներկայացում և ներդրում,
  - գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացման նպատակով մշակության արդյունավետ տեխնոլոգիաների կիրառում,

- օրգանական գյուղատնտեսության մեջ ներգրավված հողատարածքների ավելացում,
- աջակցություն հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների բացասական ազդեցությունը մեղմող միջոցառումների ներդրմանը գյուղատնտեսական արտադրությունում,
- անասնակերի որակի բարելավման և արտադրության ծավալների ավելացմանն ուղղված տեխնոլոգիական նորարարությունների ներկայացում և ներդրում գյուղացիական տնտեսություններում,
- գյուղատնտեսության ոլորտում ձևավորված ավանդական գենդերային խոչընդոտների հաղթահարման առումով, կլիմայի փոփոխության բացասական ազդեցությունը մեղմող որոշումների կայացման գործում կանանց մասնակցության ընդլայնում,
- գյուղատնտեսության ոլորտում տնտեսավարող կանանց ներգրավվածության խթանում կլիմայի փոփոխության հետ կապված խնդիրներով զբաղվող պետական մարմիններում և հասարակական կազմակերպություններում:

#### **4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ**

26. Միջոցառումների իրականացման համար ֆինանսական աղբյուրներ կարող են հանդիսանալ միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրվող ֆինանսական միջոցները, ինչպես նաև օրենսդրությամբ չարգելված այլ միջոցները:

#### **5. ԱԿՆԿԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

27. Հայեցակարգի իրականացման արդյունքում ակնկալվում են հետևյալ արդյունքները`
- գյուղատնտեսության ոլորտում կլիմայի փոփոխության ազդեցության վերաբերյալ գիտելիքի և հմտությունների հզորացում,
  - գյուղատնտեսական արտադրության դիմակայության բարձրացում կլիմայի փոփոխության, օդերևութաբանական վտանգավոր երևույթներից և ռիսկերից,
  - կլիմայի փոփոխության և օդերևութաբանական վտանգավոր երևույթների և ռիսկերի նկատմամբ գյուղատնտեսությանը և տնտեսավարողներին հասցվող վնասների մեղմում: